րարեալ ամենեցուն քահանայապետին սրբոյ՝ ասացին, թէ «Փոխանակ զի ոչ լուար բանից մերոց, եւ ի միաբանութենէ մերմէ զանձն քո ի բաց մերժեցեր՝ գիտասջիր, զի որպէս եդեալ է ի մտի չթագաւորել սմա եւ այլ եւս ի վերայ մեր՝ խոստանամք[1] չքահանայանալ եւ ոչ քեզ առ յերկարս ի վերայ աշխարհիս մերում»: *34* Եւ զայս այսպէս ասացեալ ամենայն աւագաց տանուտերանց[2] աշխարհիս Հայոց առաջի հայրապետին Սահակայ՝ ելին զայրագնեալք ի խրատուէ սրբոյն, եւ այլ ոչ եւս կամեցան դառնալ առ երանելի քահանայապետն Սահակ. զի էր զնոսա շրջափակեալ եւ պաշարեալ անիծից երանելոյ հայրապետին Ներսէսի, ի համաւրէն կորստեան խորհուրդս:

ԺԴ. Եւ այնուհետեւ միաբանեալ գնացին ի դուռնն, եւ երթեալք անդր յանդիման եղեն արքային Պարսից Վռամայ: *2* Ընդ որս էր եւ երէց[3] մի Սուրմակ անուն ի գաւառէն Բզնունեաց, ի գեղջէն որ կոչի Արծկէ, ի տոհմէ քահանայից գաւառին [մեկուսանայր][4]. որոյ միաբանեալ ընդ նախարարսն Հայոց, ճեղքեալ ի խրատուէ սրբոյ հայրապետին Սահակայ՝ խաւսէր բանս անհանճարս եւ առաւել աղտեղիս քան զամենայն նախարարսն Հայոց զթագաւորէն Արտաշեսէ առաջի աւագորերոյն Պարսից. շնորհ առնելով նախարարացն Հայոց՝ յաղագս խոստանալոյ նմա ոմանց յաւագանւոյն Հայոց զաթոռ կաթողիկոսութեան աշխարհին Հայոց: *3* Եւ ծանուցեալ նախագոյն[5] զպատճառս տրտնջոյն իւրեանց Սուրենայ եւ այլ աւագանւոյն Պարսից. քանզի Սուրէնն պահլաւ՝ էր ի ժամանակին յայնմիկ հազարապետ դրանն արքունի. եւ հանդերձ նովաւ եւ այլ մեծամեծաւք դրանն հասուցին զբանս ամբաստանութեանն առ Վռամ արքայն Պարսից:

4 Եւ լուեալ արքային Պարսից այնպիսի բողոք յազատանւոյն՝ ոչ թոյլ տայր նոցա խաւսել առ վայր մի առանց գալոյ ոսոխին ի դուռնն: *5* Վաղվաղակի դեսպան արարեալ զթագաւորէն Հայոց զԱրտաշեսէ[6]՝ առ ինքն ճեպով գալ հրամայէր. գալ ընդ նմա գրէր[7] եւ մեծի քահանայապետին Հայոց Սահակայ: *6* Եւ եկեալ նոցա ի դուռն՝ հարցանէր նախ առանձին արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրտաշէս, եթէ «Ձի՞նչ են իրքդ, յաղագս որոյ ամբաստանեն զքէն նախարարքդ Հայոց»: *7* Եւ նորա պատասխանի տուեալ ասէր, եթէ «Ամենեւին ոչ գիտեմ, զինչ խաւսին եւ չարախաւսեն դոքա զինէն.

1 *Զ.* ի վերայ մեր, ստանամք. *Ատ.* եւ այլ եւս ի վերայ, խոստանամք *ԲԳտ.* եւ այլ եւս ի վերայ խոստանամք

2 *Զ.* տանուտերաց. *վերեւից աւելացրած* ն՝ տանուտերանց

3 *ՁԱտ.* էրէց

4 *ՁԱտ.* ի գաւառին մեկուսանայր. *այսպէս ըստ ԲԳտ.*

5 *Զ.* նախգոյն

6 *ՏՏ.* Արտաշեսէ

7 *ՁՏՏ.* գալ նմա գրէր. *այսպէս ըստ Ճառ.*